ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԱՐՄԱՎԻՐ»
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩЕСТВО
ВОДОПОЛЬЗОВАТЕЛЕЙ
«АРМАВИР»

ՀՀ Արմավիրի մարզ
Գ. Սարդարապատ, Աբովյան 72
Էլ. փոստ՝ armavir-wua@mail.ru

Թիվ ,,_____456_____,,

____29_ _____09_____ 2025թ.

«ԼՈՒՍԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ,ԴԱՎԹԱՇԵՆ 2 ԹԱՂ., Շ 16/2

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Արմավիր» ՋՕԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից «Տեղեկատվության մշակման սարքերի տեղադրման ծառայությունների» գնման նպատակով կազմակերպված ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԾՁԲ-25/21 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Լուսավոր ճանապարհ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից):

Ընթացակարգի գնահատման արդյունքում «Լուսավոր ճանապարհ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և ընտրված մասնակցի հետ 2025թ.-ին ապրիլի 08-ին կնքվել է պայմանագիր, որի շրջանակներում մասնակիցը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի ձևով: Այնուհետև հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և 22.07.2025թ. «Արմավիր» ՋՕԸ-ի և «Լուսավոր ճանապարհ» ՍՊԸ-ի միջև կնքվել է համաձայնագիր, սակայն առ այսօր ընկերությունը չի կատարել համաձայնագրով հաստատված պարտականությունները և չի մատուցել վերոնշյալ ծառայությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը Պայմանագիրը ենթակա է լուծման համաձայն Պայամանգրի 7.9 կետի.

«Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am

հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին»:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահավումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերության սպասարկող բանկ՝ գումարները գանձելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատվրում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով Օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու դեպքերն, այդ թվում՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազրված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի որակավորման և կատարման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի որակավորման և կատարման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնի որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

«ԱՐՄԱՎԻՐ» ՋՕԸ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ _____ ՎԱՀԱԳՆ ԱՐՇԱԿՅԱՆ